«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Թիմային աշխատանք, համատեղ դասավանդում՝ առավելություններն ու բացթողումները

Հետազոտող ուսուցիչ՝ Տաթև Հայրապետյան

Դպրոց՝ «Տիգրան Մեծ» ՌՄՀՎ

Մենթոր ուսուցիչ՝ Հասմիկ Պողոսյան

Արմավիր 2023

Բովանդակություն

1. Նախաբան ……..……. 3-5

2.Գրականության ակնարկ……..6-8

3.Գործնական համատեքստ…….…… 9-14

4.ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ……..…….....15-16

5. Գրականության ցանկ….…….…….……17

6.Հավելված……..……..18-19

ՆԱԽԱԲԱՆ

Կրթության մատչելիությունն ու հասանելիությունը՝ որպես հասարակության զարգացման ու առաջընթացի հիմնական միջոցներ, ամրագրվել են դեռևս 1990 – ականներին, երբ ՄԱԿ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ երկրների կողմից ընդունվեցին «Երեխաների իրավունքների մասին կոնվենցիա»-ն և «Կրթությունը բոլորի համար համաշխարհային հռչակագիր»-ը:

Ուսումնական գործընթացը պետք է կազմակերպել այնպես, որ յուրաքանչյուր երեխա ունենա հնարավորություն բացահայտվել և զարգանալ որպես ստեղծագործ անհատ: Այս ամենը պահանջում է ժամանակակից մոտեցում ուսումնական գործունեության կազմակերպմանը, աշխատանքի նոր ձևերի և մեթոդների որոնմանը: Ինչպես ասում էր հայտնի մանկավարժ Սկատկինը, մեթոդը դա ճանապարհ է, որով ուսուցիչն աշակերտին տանում է անգիտությունից դեպի գիտելիք, անկարողությունից դեպի կարողություն, նոր զարգացման ուղի:

Արդյունավետ ուսուցում կազմակերպելու, կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարներ և ձևեր: Մեթոդների և նպատակների հետ, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված և կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով:

Ուսուցման մեթոդներն այսօր կազմում են երկու խումբ՝ ավանդական և նոր ժամանակակից մեթոդներ: Ավանդական են համարում բացատրական զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած է գիտելիքի պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը: Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը:

Ուսուցման գործընթացի կազմակերպումը ավելի արդյունավետ դարձնելու համար ընտրել եմ «Թիմային աշխատանքը, համատեղ դասավանդում՝առավելություններն ու բացթողումները» մեթոդը:

Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ այսօր բոլոր երեխաները չեն կարող սովորել նույն ձևով ու կրթական նույն մեթոդներով:

Ուսուցչի կարևորագույն դերը աշակերտների համար այնպիսի բարենպաստ պայմաններով միջավայրի ստեղծումն է, ուր նրանք կկարողանան արտահայտել իրենց ուժեղ կողմերը, ինչպես նաև սովորել ընկերներից և, իհարկե դառնալ գիտելիքի ակտիվ մշակողը:

Գտնվելով ներառական կրթության իրականացման այս փուլում՝ պետք է փաստենք, որ դասարաններում հաճախ դժվար է կազմակերպել այնպիսի կրթական միջավայր, որտեղ բոլոր երեխաները կկարողանան հավասար ներգրավվել դասին: Հետազոտական աշխատանքի շրջանակներում կփորձենք ներկայացնել դասի համատեղ կազմակերպման և թիմային աշխատանքի ձևերը, որոնք հնարավորություն են տալիս դասին ներգրավելու բոլոր աշակերտներին: Այստեղ ստեղծվում են աջակցող հարաբերություններ, բանիմացություն, միասին աշխատելու նրբություն:

Լավ թիմային աշխատանքը լավ հաղորդակցության, համակարգման, փոխլրացման, վստահության և նվիրվածության հիմք է: Ներկայացնենք թիմային աշխատանքի մի քանի առավելություններ, որոնք կարող են կիրառվել կրթական համատեքստում, որտեղ մի քանի աշակերտ ներգրավված է ընդհանուր նախագծում:

- Թիմային աշխատանքը խթանում է ստեղծագործությանը և ուսման որակի բարելավմանը:
- Թիմային աշխատանքը հնարավորություն է տալիս աշակերտներին կենտրոնանալ այն ամենի վրա, ինչ նրանք անում են լավագույնը:

Թիմով աշխատելը քաղաքացիական հասարակություն կերտելու պայմաններից մեկն է: Այդ հմտությունը երեխաները պետք է նույնպես ձեռք բերեն դպրոցում դասավանդման ինտերակտիվ մեթոդներով պարապող դասերին: Ուսուցչի հանձնարարությունը կատարելիս նրանք սովորում են «ես ասեմ» - ից անցնել խմբով ճիշտ պատասխանը գտնելուն: Թիմով, խմբով աշխատելիս, պատասխանը գտնելու համար, գլուխ պահող չի կարող լինել, յուրաքանչյուրն իրեն կարևոր է զգում և գնահատվում, արժևորվում է: Մյուս մեթոդը համատեղ դասավանդումն է:

Համատեղ դասավանդումը մոդել է, որը շեշտում է նույն թիմի ներսում բոլոր անդամների միջև համագործակցությունն ու հաղորդակցումը, ինչն ուղղված է բոլոր սովորողների կրթական կարիքները լրացնելուն:

Այս մոդելն ունի մի շարք առավելություններ՝ մասնագիտական հմտությունների փոխանակում, սովորողների կրթական կարիքները հասկանալու ավելի մեծ ծրագրային հնարավորություն, ընդհանուր կրթության շրջանակներում հատուկ կարիքներով սովորողների համար ավելի մեծ ծրագրային հնարավորություն, ինչը թույլ կտա նաև բարելավել այդ սովորողների հարաբերություններն իրենց հասակակիցների հետ, ինչպես նաև մասնագետների համար ավելի թեթև աշխատանքային մթնոլորտ: Սակայն կա մի քանի ընդհանուր պայմաններ, որոնց ճիշտ կիրառման դեպքում է հնարավոր այս մոդելը արդյունավետ համարել:

Դրանք են՝ համատեղ դասավանդող մասնագետների նպատակաուղղված համագործակցությունը, կազմակերպչական աջակցությունը, միանման աշխարհայացքը և աշխատանքի կազմակերպման ճիշտ և բավականաչափ ընտրված ժամանակահատված:

Առավել հաճախ հանդիպում են հետևյալ մասնագետների համատեղ դասավանդող թիմերը՝

- հատուկ և ընդհանուր կրթություն իրականացնող դասավանդողներ
- յուրահատուկ մասնագիտական ուղղվածության և հատուկ կամ ընդհանուր կրթության դասավանդողներ
- երկու ընդհանուր կրթության դասավանդողներ
- խոսքի, լեզվական խնդիրներ լուծող մասնագետ և հատուկ կամ ընդհանուր կրթության մասնագետ
- սոցաշխատող և հատուկ կամ ընդհանուր կրթության դասավանդող
- այլ աջակցող մասնագետներ կամ կամավորներ և ընդհանուր կամ հատուկ մասնագետ
- ընտրովի առարկաների դասավանդող և ընդհանուր կամ հատուկ մասնագետ

Այսպիսով ուսուցչի մասնագիտական կարողությունների մասն են կազմում բազմազան մեթոդների իմացությունը, դրանք կիրառելու համադրությունը:

Հետազոտության **<u>նպատակն</u> է**՝ներկայացնել համատեղ դասավանդման և թիմային աշխատանքի առանձնահատկությունները, համատեղ դասավանդման առանձնահատկությունները:

Թիմային աշխատանքը, համատեղ դասավանդումը «Գրականություն» առարկայի դասապրոցեսին կնպաստի 9-10-րդ դասարանների աշակերտների սոցիալականացմանը, մտքերի արտահայտման և փոխանակման մշակույթի ձևավորմանը, հայրենիքի նկատմամբ սիրո դրսևորմանը:

Նպատակից բխում են հետևյալ **խնդիրները** `

- ուսումնասիրել և ներկայացնել թիմային աշխատանքի առանձնահատկությունները
- ներկայացնել համատեղ դասավանդման դասի օրինակներ
- ներկայացնել համատեղ դասի առավելությունները և թույլ կողմերը

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Թիմային աշխատանքը ենթադրում է երկու կամ ավելի մարդկանց համագործակցություն, որոնք ուղղված են ընդհանուր նպատակների իրականացմանը: Յուրաքանչյուր անդամ պետք է նպաստի աշխատանքի մի մասի իրականացմանը:

«Թիմային աշխատանք» անվանումն առաջացել է Առաջին համաշխարհային պատերազմից հետո: Ներկայումս դա արդյունավետ գործելաոճ է, որն ապահովում է տարբեր տեսակետներ և ծառայում է տնտեսական, քաղաքական և սոցիալական ոլորտներում ծագող հակամարտությունների առավել արդյունավետ լուծմանը:

Թիմում աշխատելը ենթադրում է տարբեր անհատականությունների համախմբում՝ նպատակ իրականացնելու համար: Որպեսզի թիմային աշխատանքը հաճելի և արդյունավետ լինի, թիմերը պետք է հաշվի առնեն որոշ կետեր, որոնք կօգնեն չեղյալ համարել խմբի դինամիկային խանգարող հատկությունները:

Աշխատանքում հաջողակ լինելու համար ճանաչողական հմտությունները բավարար չեն: Ոչ ճանաչողական հմտությունները աստիճանաբար դառնում են աշխատանքի կատարման նոր չափանիշ: Բարձր արդյունավետությամբ թիմի գաղտնիքը՝ թիմային աշխատանքն է:

Թիմային աշխատանքի նպատակն է բարձրացնել սովորողների համախմբվածությունը և արդյունավետությունը՝ համատեղ առաջադրանք կատարելով: Լավ և համակարգված թիմ դառնալու համար սովորողները պետք է հասկանան միմյանց, լինեն մոտիվացված և լիովին ներգրավվեն աշխատանքում: Լավ համակարգված թիմը սկսում է կիսել ծանրաբեռնվածությունը: Սա նշանակում է, որ եթե աշակերտներից մեկը համեմատաբար քիչ աշխատանք ունի անելու, նա կարող է օգնել թիմի մեկ այլ անդամին

ավարտելու իր աշխատանքը: Թիմը ընդհանրական հասկացություն է և մեկի աշխատանքի թերացումից, մնացած բոլորի աշխատանքի արդյունքը կարող է արժեզրկվել:

ՀՀ – ում կրթական համակարգը պահանջում է մի շարք խնդիրների լուծում, որոնցից ամենակարևորը կրթության որակի բարելավումն է:

Թիմը հաջողակ աշխատանքի հիմքն է գործունեության յուրաքանչյուր ոլորտում: Թիմի յուրաքանչյուր անդամ ունի իր անհատական ներդրումը ընդհանուր աշխատանքում և պատասխանատվություն է կրում վերջնական արդյունքի համար:

Հաջողված է այն թիմը, որի յուրաքանչյուր անդամ գիտի իր անելիքն ու գիտակցում է, որ իր կատարած ամենափոքր քայլից է կախված թիմի հաջողությունը:

Թիմի հայեցակարգը ենթադրում է, որ բոլոր անդամները հավատարիմ են միասնական աշխատանքին, կրում են պատասխանատվություն:

Թիմային աշխատանքը հնարավոր է իրականացնել, երբ կրթական գործընթացում ներառվում են ակտիվ և ինտերակտիվ ուսուցման մեթոդները, որոնց մեջ առանձնանում են ուսուցման թիմային և խմբային մեթոդները: Շարունակեմ ներկայացնել թիմային աշխատանքի առավելությունները՝

- թիմային աշխատանքը թույլ է տալիս թիմի յուրաքանչյուր աշակերտի լրացնել միմյանց՝ ստեղծելու վերջնական աշխատանք, որը հնարավոր չէր անհատապես ձեռք բերել
- հստակ և արդյունավետ հաղորդակցվելու կարողությունը թիմային աշխատանքի հիմնարար հմտությունն է

Թիմի հետ աշխատելիս կարևոր է, որ աշակերտը կիսվի իր մտքերով, գաղափարներով և հիմնական համապատասխան տեղեկություններով: Գոյություն ունեն տարբեր տեսակի հաղորդակցման հմտություններ՝ և՛ բանավոր, և՛ ոչ բանավոր:

▪Թիմային աշխատանքի դինամիկայի շրջանակներում կարևոր է, որ ներգրավված կողմերը հասկանան այն աշխատանքը, որի համար իրենք պատասխանատու են և ջանքեր գործադրեն նշված առաջադրանքները ժամանակին և ակնկալվող մակարդակին հասցնելու համար: Ամբողջ թիմը, սահուն աշխատելով և պատասխանատվություն կրելով սեփական աշխատանքի համար, կարող է միասին աշխատել ընդհանուր նպատակի ուղղությամբ:

▪Աշխատանքում ազնվության կիրառումը կարող է լուծել տարաձայնությունները, բացահայտել, որ աշակերտը չի կարողացել ժամանակին կատարել որոշակի

առաջադրանք կամ կիսվել դժվարություններով: Առանց ազնվության, թիմի համար կարող է դժվար լինել վստահություն ստեղծելը, ինչպես նաև արդյունավետ աշխատել միասին:

▪Կարևոր է աշխատել այլ գործընկերների հետ՝ մտքեր փոխանակելու, աշխատանքը բարելավելու և միմյանց օգնելու համար:

Թիմային աշխատանքը ենթադրում է թիմի անդամների համագործակցություն: Համագործակցային ուսուցմանը նպաստող մեթոդ է թիմային առաջադիմության մեթոդը: Մեթոդը մշակվել է Ջոն Հովկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտներ առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար. քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում:

Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերի:

Ժամանակակից աշխարհը պահանջում է լինել թիմի անդամ ՝ հաղորդակցվել, քննարկել, աշխատանքը բաշխել:

Դասարանի աշակերտները բաժանվում են խմբերի և կատարում այս կամ այն հանձնարարությունը:

Ներկայացնեմ թիմերի վերաբերյալ հետաքրքիր փաստեր.

- Թիմում աշակերտների քանակը պետք է լինի 4 – 9 ՝ ոչ ավել, ոչ պակաս: Սահմանված թիմի քանակը մոբիլ է, արագ է կողմնորոշվում, հնարավոր է ճիշտ բաշխել աշխատանքը և վերահսկել ընթացքը:
- Կարևոր է բազմազանությունը թիմի ներսում: Տարբեր աշխարհայացքների տեր աշակերտները կարող են ավելի լավ արդյունք ստեղծել, քան միանման մտածողները: Տարբերությունները կարող են բերել կոնֆլիկտներ, բայց հենց դրանց շնորհիվ է ծնվելու արդյունքը:

Պետք է նշել, որ արդյունքի հաջողության հիմքը աշակերտներն են, ովքեր ներգրավված են թիմում, այլ կերպ ասած հաջողությունը պայմանավորում է թիմը: Եթե թիմն ուզում է հասնել ցանկալի և նախատեսված արդյունքի, ապա թիմի մասնակիցներին պետք է միավորի մեկ ընդհանուր նպատակ ու դրանից բխող այլ գործոններ ՝ միասին աշխատելու ցանկություն, պատասխանատվության զգացում, սահուն կերպով միմյանց լրացնելու կարողություն:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Համատեղ դասավանդումն իրենից ներկայացնում է երկու կամ ավել լիազորված մասնագետների համագործակցություն, ովքեր կիսում են հանձնարարված պարտականությունները, աշխատում են մի խումբ սովորողների հետ մեկ ընդհանուր աշխատանքային տարածքում: Նման խմբային գործունեությունն իրականացվում է նրա համար, որպեսզի սովորողների կրթական պահանջների բավարարումն ավելի արդյունավետ լինի: Այս խմբերը կարող են կազմված լինել երկարատև կամ կարճատև ժամանակահատվածի հիմքերով՝ նրանք կարող են միասին աշխատել մեկ ուսումնական տարի կամ մեկ նախագծի, սովորողների մոտ կոնկրետ հմտության զարգացման որևէ կարճաժամկետ ծրագրի շրջանակներում: Միջին դպրոցում այս մոդելի հիմնական առավելությունը ընդհանուր կրթական ծրագիր իրականացնող և հատուկ մանկավարժի համատեղ աշխատանքն է: Հատուկ կարիքներ ունեցող սովորողներն այս դեպքում կունենան հատուկ մանկավարժական աջակցություն: Եթե երկու մասնագետները կարողանան համակարգված և հետևողականորեն աշխատել, ապա բոլոր սովորողների կրթական կարիքները կստանան լիարժեք լուծում:

Համատեղ դասավանդման մոդելն ունի մի շարք առավելություններ: Դրանք են՝

- մասնագիտական հմտությունների փոխանակումը
- սովորողների կրթական կարիքները հասկանալու ավելի մեծ հնարավորություն
- ընդհանուր կրթության շրջանակներում հատուկ կարիքներով սովորողների համար ավելի մեծ ծրագրային հնարավորությունը

Վերջինս թույլ կտա նաև բարելավել այդ սովորողների հարաբերություններն իրենց հասակակիցների հետ:

Կան մի քանի ընդհանուր պայմաններ, որոնց ճիշտ կիրառման դեպքում միայն հնարավոր կլինի այս մոդելը արդյունավետ համարել: Դրանք են՝

- համատեղ դասավանդող մասնագետների նպատակաուղղված համագործակցությունը
- ադմինիստրատիվ աջակցությունը
- միանման աշխարհայացքը
- աշխատանքի կազմակերպման ճիշտ ընտրված ժամանակահատվածը

Համատեղ դասավանդում համարվում է դասավանդման այն տեսակը, երբ երկու կրթական աշխատողներ աշխատում են միասին՝տարաբնույթ ընդունակություն ունեցող սովորողների հետ:

Առավել հաճախ հանդիպում են հետևյալ մասնագետների համատեղ դասավանդող թիմերը՝

- հատուկ և ընդհանուր կրթություն իրականացնող դասավանդողներ
- հատուկ կամ ընդհանուր կրթվածության դասավանդողներ
- երկու ընդհանուր կրթության դասավանդողներ
- խոսքի/լեղվական խնդիրներ լուծող մասնագետ և հատուկ կամ ընդհանուր կրթության մասնագետ
- սոցաշխատող և հատուկ կամ ընդհանուր կրթության դասավանդող
- այլ աջակցող մասնագետներ կամ կամավորներ և ընդհանուր կամ հատուկ մասնագետ
- ընտրովի առարկաների դասավանդող և ընդհանուր կամ հատուկ մասնագետ

Վեց արդյունավետ քայլ համատեղ դասավանդում իրականացնելու համար.

1. կապերի հաստատում, անձնական մակարդակում նմանությունների բացահայտում
2. ուսուցման, դասարանի կառավարման, դասավանդման ոճերի հստակեցում
3. ուժեղ և թույլ կողմերի վերհանում, քննարկում
4. կրթության նպատակի, անհատական ուսուցման պլանի քննարկում, մասնագետների հետ համագործակցում
5. գործողությունների պլանավորում, թիմային աշխատանք
6. շարունակական միասնական ուսուցում

Մասնագետներն առանձնացնում են համատեղ դասավանդման հետևյալ մոտեցումները, որոնք ներմուծվել են գիտություն 1993թ.: Դրանք են՝



1. **Աջակցող դասավանդում**
2. **Զուգահեռ դասավանդում**
3. **Թիմային դասավանդում**
4. **Այլընտրանքային դասավանդում**
5. **Ուսուցման կենտրոնների տեղափոխման մոդելով դասավանդում**



1. Աջակցող դասավանդում

Մեկ ուսուցիչը դասավանդում, առաջնորդում է ողջ դասարանը՝ տալով ընդհանուր ուղղորդումներ, իսկ մյուս ուսուցիչը, որպես օգնական, դիտարկում է առանձին աշակերտների վարքը և տարբերակված, առանձին ուղղորդումներով օգնում է նրանց՝ առավելագույնս ներգրավվելու դասապրոցեսին:

Այս մոդելի դեպքում երկրորդ ուսուցիչը օգնում է գլխավոր ուսուցչին՝ հասնելու դասի հիմնական նպատակին, ինչպես նաև օգնում այն աշակերտներին, ովքեր ուսուցչի հրահանգներն ընկալելու հետ կապված լրացուցիչ աջակցության կարիք ունեն:

2. Զուգահեռ դասավանդում

Դասարանում ընթանում է զուգահեռ ուսուցում երկու խմբերում: Խմբերի բաժանման սկզբունքը, որպես կանոն, կախված է լինում աշակերտների գիտելիքների և կարողությունների մակարդակից կամ սովորելու ոճերի ընդհանրություններից: Յուրաքանչյուր ուսուցիչ յուրաքանչյուր խմբի հետ աշխատում է իր ուղղորդումներով, սակայն դասի նպատակը երկու խմբերում նույնն է: Սա առավել քիչ օգտագործվող մոդելներից է:

3. Թիմային դասավանդում

Այս մոդելում ուսուցիչները դասավանդում են միասին՝ միևնույն նպատակով և ուղղորդումներով՝ դասի ողջ ընթացքում իրար փոխլրացնելով: Այս մոդելի դեպքում հաճախ այնպես է ստացվում, որ ուսուցիչներից մեկը առավելապես առաջնորդում է դասի բովանդակային մասը, իսկ մյուս ուսուցիչը՝ հրահանգների, գործնական առաջադրանքների ուղղորդումների մասը:



4. Այլընտրանքային դասավանդում

Այս մոդելում ուսուցիչներից մեկը աշխատում է դասարանի աշակերտների մեծ խմբի հետ, միևնույն ժամանակ մյուս ուսուցիչը աշխատում է մեկ այլ՝ ավելի փոքր խմբի հետ՝ ունենալով այլ՝ հաճախ անհատական նպատակներ ու կիրառելով այլ ուղղորդումներ:



Սա հիմնականում կիրառվում է այն աշակերտների արդյունավետ ներգրավման ու դասավանդման համար, ովքեր ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք: Այս մոդելի դեպքում, նոր նյութ չի փոխանցվում դասարանին, այլ աշակերտները կատարում են գործնական կամ ինքնուրույն աշխատանք:

5. Ուսուցման կենտրոնների տեղափոխման մոդելով դասավանդում

Այս մոտեցմամբ մասնագետները բաժանում են սովորողներին, և մատուցվող նյութը: Յուրաքանչյուր դասավանդող մատուցում է նյութը խմբերից մեկին, իսկ հետո կրկնում պահանջը մյուս խմբի համար: Անհրաժեշտության դեպքում առանձնացվում է երրորդ խումբը, որն աշխատում է անկախ:



ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Հետազոտությունը իրականացրել եմ Արմավիրի «Տիգրան Մեծ»-ի անվան ռազմամարզական հատուկ վարժարանի IX դասարանում, որտեղ սովորում են 16 աշակերտ: Աշակերտների հետաքրքրությունները և առաջադիմությունը տարբեր էին: Աշակերտները ակտիվ են, պատրաստակամ յուրաքանչյուր դասաժամի նոր գիտելիքներ ձեռք բերելու, այդ իսկ պատճառով հետազոտության իրականացումը այս դասարանում կտա ցանկալի արդյունք: Հետազոտական աշխատանքը իրականացնելու համար ընտրել եմ «Մովսես Խորենացի.«Հայոց պատմության» կառուցվածքն ու բովանդակությունը» թեման: Հետազոտությունը իրականացրել եմ մեկ դասաժամի ընթացքում: Որպես հետազոտության իրականացման մեթոդ կիրառել եմ թիմային դասավանդում մեթոդը, որն իրականացրել եմ նույն դպրոցի գրականության ուսուցչուհի Հ. Սամվելյանի հետ:

Դասը սկսել եմ կազմակերպչական մասով, որից հետո ստուգել եմ տնային աշխատանքները և կատարել եմ անհատական հարցում: Դասը ներկայացնելու ընթացքում աշակերտները խոսեցին «Հայոց պատմության» կառուցվածքի և բովանդակության մասին: Աշակերտներին բաժանել եմ 4 խմբի և յուրաքանչյուրին հանձնարարել հետևյալ առաջադրանքները.

1-ին խումբ	Ներկայացնել «Հայոց մեծերի ծննդաբանությունը» հատվածը
2-րդ խումբ	Ներկայացնել «Միջին պատմություն մեր նախնիների» հատվածը

3-րդ խումբ	Ներկայացնել «Մեր հայրենիքի պատմության ավարտը» հատվածը
4-րդ խումբ	Ներկայացնել «Ողբ»-ը հատվածը

Խմբերի մասնակիցներին միավորում էր մեկ ընդհանուր նպատակ ու դրանից բխող այլ գործոններ՝ միասին աշխատելու ցանկություն, պատասխանատվության զգացում, սահուն կերպով միմյանց լրացնելու կարողություն: Մեկ ընդհանուր նպատակի ու դրանից բխող այլ գործոնների շնորհիվ, արագ կողմնորոշվելու և ճիշտ համագործակցության արդյունքում թիմերը(բոլոր աշակերտների ներգրավվածությամբ) համառոտ ներկայացրել են իրենց առաջադրված նյութերը: Այնուհետև գրատախտակի վրա ստեղծել են աղյուսակ. համատեղ աշխատանքի արդյունքում թիմերից մեկական աշակերտ գրատախտակին մոտենալով լրացրել է այն և ստացել հետևյալ թիմային արդյունքը.

«Հայոց պատմություն»(բաղկացած է 3 գրքից)	**Ժամանակահատվածի ընդգրկումը Գլուխների քանակը**
1. «Հայոց մեծերի ծննդաբանությունը»	Ընդգրկում է հայոց պատմությունն ամենասկզբից մինչև Ք.ծ.ա. 132թվականը, 32 գլխից
2.«Միջին պատմություն մեր նախնիների»	Ներկայացնում է հայոց պատմությունը Ք.ծ.ա. 132թ-ից մինչև 318 թվականը, 92 գլխից
3.«Մեր հայրենիքի պատմության ավարտը»	Ընդգրկում է 318-428թթ. Իրադարձությունները, 68 գլխից
«Ողբ»-ը հատվածը	Զետեղված է երկի վերջում,տալիս է պետականության վերացման հետևանքով հայ իրականության քաղաքական անկման,կյանքի բոլոր բնագավառներում բարոյալքության խտացված պատկերը

Մինչև նոր նյութի հաղորդումը, թեմայի վերջնական յուրացման համար, դասն ամփոփեցի հարցադրումների միջոցով: Այնուհետև գրականության ուսուցչուհի Հ. Սամվելյանը ներկայացրեց նոր թեման: Որպես լրացուցիչ աշխատանք, աշակերտները ընթերցեցին հանձնարարված նյութի լրացուցիչ տեղեկությունները: Վերջում

հանձնարարվեց տնային աշխատանք՝ աշխատանքային տետրերում գրավոր պատասխանել դասի վերջում տրված հարցերին:

Խմբային աշխատանքի արդյունքում թույլ կարողունակություններ ունեցող մի քանի աշակերտ իրենց շատ ակտիվ դրսևորելով և մյուսների հետ համագործակցելով ներգրավվեցին դասին,դասի վերջում էլ ակտիվության համար գնահատականին գումարվեց ևս երկու միավոր :

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թիմային աշխատանքը խթանում է ստեղծագործականությանը: Թիմի անդամները փոխանակվում են փորձով և գիտելիքներով: Այսպիսի աշխատանքում լինում են նաև թերություններ, ինչպիսիք են՝

- թիմի անդամների միջև շեղվելը
- անդամների բախումները
- առաջադրանքների անարդար բաշխունը

Վերլուծելով թեմայի շուրջ համապատասխան գրականությունը և իրականացնելով փորձնական դաս՝եկել ենք հետևյալ եզրակացությունների.

- Թիմային աշխատանքը և համատեղ դասավանդումը ունեն բավական առավելություններ դասն արդյունավետ և ներառող կազմակերպելու համատեքստում:
- Կիրառելով համատեղ դասավանդման փորձնական տարբերակ՝ կարող ենք նշել դրա առավելությունը. դասի ընթացքում բոլոր աշակերտները ընդգրկված էին դասընթացին, ուշադիր էին և ինքնուրույն:

Կատարված հետազոտության ընթացքում պարզ է դառնում, որ համատեղ դասավանդման միջոցով ուսուցիչները կկարողանան արդյունավետ ուղիներով բարելավել սովորողների բազմազան կարիքները: Համատեղ դասավանդման գերագույն նպատակն է

համատեղել և ընդլայնել յուրաքանչյուր մասնագետի փորձագիտությունը և ի շահ բոլոր սովորողների և պլանավորել ու ստեղծել հատուկ մշակված ներառման մշակույթը դասարանում:

Պետք է նշել, որ եթե երկու մասնագետներ կարողանան համակարգված և հետևողականորեն աշխատել, համատեղ դասավանդման ընթացքում կիրառել աջակցված, զուգահեռ և թիմային մոդելները, ապա սովորողների կրթական կարիքները կստանան լիարժեք լուծում և դասապրոցեսը կդառնա ավելի արդյունավետ: Դասադրոցեսի ժամանակ համատեղվում են ուսուցիչների ուսումնական ծրագրի ու առարկայի բովանդակային իմացությունը:

Իսկ դպրոցի ռեսուրսների արդյունավետ օգտագործումը կապահովի ուսումնառության առավել հաճելի միջավայրը՝ բարելավելով ուսումնական ամենատարբեր կարիքներ ունեցող երեխաներին անհրաժեշտ պայմաններով: Համատեղ կրթությունն ամբողջ աշխարհում տարբեր է: Կրթական այս մոդելը արագորեն փոխվում է համաշխարհային մասշտաբով, քանի որ երկրները պայքարում են տնտեսության վերևում լինելու համար: Երկրի պատմությունը, մշակույթը, կրոնական համոզմունքները և քաղաքականությունը նրանց ազգային ինքնության ասպեկտներն են, և այս հատկանիշներն ազդում են անհատի վերաբերմունքի վրա համագործակցության նկատմամբ ինչպես դասարանում, այնպես էլ աշխատավայրում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Դասավանդման ժամանակակից մոտեցումներ», Ձեռնարկ ուսուցիչների, ուսուցչի օգնականների և մանկավարժահոգեբանական աջակցման ծառայություններ մատուցող մասնագետների համար, Մանուկ Խաչատրյան, Միեր Դավթյան, Երևան 2019 թ.:
2. «Ներառական կրթության ռազմավարություններ դասագիրք» Մինեսոթայի համալսրան, ԱՄՆ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Հայաստանի Հանրապետություն ՅՈՒՆԻՍԵՖ-ի Հայաստանյան գրասենյակ, 2019 թ.:
3. «Ուսուցման արդյունավետ հնարներ» Ս.Խաչատրյան, Երևան, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020 թ.:
4. https://hy.warbletoncouncil.org/trabajar-en-equipo-401
5. https://ahaslides.com/hy/blog/importance-of-teamwork/
6. https://armsme.am/?p=4927
7. https://lalamanoukyan.wordpress.com/2014/06/05/cooperative-teaching/

Հավելված

Օրվա դասի պլան (11.10.2023)

Ուսուցիչ՝ Տաթև Հայրապետյան

Առարկա՝ Գրականություն

Դասարան IXա

Կիսամյակ՝ I կիսամյակ

Թեմա՝ Մ. Խորենացու դասերը

Դասի տիպը՝ Ամփոփիչ- վերլուծական

Օգտագործված նյութեր 1.Դասագիրք

2.<<Հայոց պատմության>> առաջաբանը

3.Համացանցային նյութեր

Նպատակը՝

. ծանոթանալ Մովսես Խորենացու կյանքին և գործունեությանը,

. անդրադառնալ Խորենացու «Հայոց պատմություն» գրքին՝ որպես հայ ժողովրդի ծննդաբանության հիմնական աղբյուրի,

. ծանոթանալ Մ. Խորենացու «Հայոց պատմության» գրքի բովանդակությանը,

. առասպելների միջոցով ծանոթանալ մեր պատմության հերոսական էջերին:

Վերջնարդյունքը՝

. կարողանա ներկայացնել Մ. Խորենացու կյանքն ու գործունեությունը,

. կարողանա արժևորել Խորենացու «Հայոց պատմություն» գիրքը՝ որպես հայ ժողովրդի ծննդաբանության հիմնական աղբյուրի,

. կարողանա պատմել Մ. Խորենացու գրքի հակիրճ բովանդակությունը՝ ըստ դասագրքի,

. կարողանա արժևորել մեր ժողովրդի բարոյական չափանիշները:

Դասի ընթացքը՝

1.Խթանման փուլ

Ա) Մտագրոհի միջոցով վերհիշել Ոսկեդարի հայ պատմիչներին, առաջին հայատառ խոսքը:

Բ) Տալ Մ. Խորենացու բնութագիրը, թվարկել նրա անվան հետ կապված իրադարձությունները, ներկայացնել ասույթներ նրա մասին:

2.Իմաստի ընկալման փուլ

Ա) Ներկայացնել << Հայոց պատմություն>>-ը գրելու շարժառիթը:

Բ) Ներկայացնել <<Հայոց պատմության>> հիմնական միտքն արտահայտող մեջբերումը (գրաբարով):

Գ)<<Հայոց պատմության>> կառուցվածքը և առանձնահատկությունները:

Դ) Խորենացու սիրելի հերոսները և նրանց հակիրճ բնութագիրը:

Ե) Ներկայացնել <<Ողբը>> և նրա գաղափարական բովանդակությունը:

3.Կշռադատման փուլ

1.Բացահայտել <<Հայոց պատմության>> բացառիկ դեր հայ ազգի կյանքում, գրելու պատմական, քաղաքական, սոցիալ-տնտեսական դրդապատճառները, թողած դասերը ազգի բոլոր սերունդների կյանքում և դաստիարակչական նշանակությունը մեր օրերում:

2.Ներկայացնել <<Հայոց պատմության>> հիման վրա գրված արժեքավոր գրական գործերը:

3.Աշակերտների պատասխանների ամփոփում և գնահատում:

4.Տնային առաջադրանք - Գրել նամակ Մ. Խորենացուն կամ անցկացնել հարցազրույց Մ. Խորենացու հետ: